ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1,
հեռ. 098-04-80-46

Թիվ 03 -170

<<22>> նոյեմբերի 2012թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու 19.11.2012թ. թիվ 40-42 որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
098-04-80-46,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2012թվականի N 40-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի տարածքում 2013 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքերը սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 դրամ

2)սույն կետի <<1>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա)201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10 000 դրամ,

բ) 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30 000 դրամ,

գ)1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ,

4)20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1)չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1000 դրամ,

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման

աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլանող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործանառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի <<1>> ենթակետով սահմանցած դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործանառական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործանառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 1000 դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ,

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակեպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ:

5.Համայնքի տարածքում՝

1)բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ,

2)հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար
սահմանել՝150000դրամ:

3)խանութներում ,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական
տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝30 000 դրամ:

4)համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը տարվա համար սահմանել՝ 50 000 դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բարերները /սառնարանները/, խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ,

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ,

3)բարերի /սառնարանների/ համար՝ 200 000 դրամ,

4)խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ,

5)շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ,

6)վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

7.Համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 500 դրամ:

8.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային /սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանքի գովազդի համար՝ 1000 դրամ:

2)թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ,

3)այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ,

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9. Համյանքի արխիվիվ փաստաթղերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 500 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1000 դրամ:

11.Համայնքի տարածքում շինության կամ շինության արտաքին տեսքը փոփոխվող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեադական ինքնակառվարման մարմնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 1000 դրամ:

12. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 500 դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման վճար յուրաքանչյուր մասնակցի համար՝ 500 դրամ:

14. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճար սահմանել՝

1)կենցաղային աղբի տեղափոխման վճար յուրաքանչյուր անձի համար՝ 80 դրամ,

2)ոչ կնցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար

ա) ըստ ծավալի 1 խմ աղբի համար 1000 դրամ կամ՝

բ)ըստ զանգվածի 1 տոննա աղբի համար 3000 դրամ:

15.Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման ու փոխադրման համար սահմանել սույն որոշման 14-րդ կետով նախատեսված հաշվարկվելիք դրույքաչափերի 20%-ի չափով:

16.Համայնքի տարածքում բոլոր տուրքերի և վճարների համար սահմանվում են միասնական դրույքաչափեր:

17.Տվյալ տարվա համար հաստատված տեղական տուրքի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

18.Տեղական տուրքերը և վճարները վճարվում են Հայաստանի Հանրապետությունում՝ պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով:

19.Անվավեր ճանաչել Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու <Թումանյան

համայնքի տարածքում 2013թվականի համար տեղական տուրքեր և վճարներ հաստատելու մասին >2012թ. սեպտեմբերի 27-ի թիվ 30-Ն որոշումը:

20. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԱՇԽԵՆ

2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ

4. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք

, 098-04-80-46,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 նոյեմբերի 2012թվականի N 41

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատել Թումանյան համայնքի սեփականության 2012թվականի գույքագրման փաստաթղթերը.

1.Գույքի 45135,9 հազար դրամ ընդանուր արժեքով,որից՝

1)հիմնական միջոցներ 45135,9հազար դրամ

2)այլ շինություններ 2980,6ք.մ

3)պաշարներ 10379,9հազար դրամ

Կողմ -4 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ԱՇԽԵՆ

2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ

4. ՌԱՄԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1,
հեռ.098-04-80-46

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» նոյեմբերի 2012 թվականի N 42-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյան քաղաքային համայնքի ավագնու 2011թ. դեկտեմբերի 3-ի «Թումանյան համայնքի 2012թ. բյուջեն հաստատելու մասին» թիվ 32-Ն որոշումը և Թումանյան քաղաքի բնակիչներ՝ Միսաք Ռաֆիկի Աղամյանի, Հերմինե Համլետի Հովսեփյանի, Անետա Սիմակի Շիմալյանի, Արտաշ Մամիկոնի Գալստյանի, Գոհար Մովսեսի Մադոյանի և Ռոզիկ Վլադիմիրի Ղազարյանի դիմումները համայնքի ավագանին որոշում է.

1.Թումանյանի քաղաքապետարանի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստների բյուջեից (հոդված 4729) Թումանյան քաղաքի ստորև բերված անապահով քաղաքացիներին տրամադրել դրամական օգնություն.

1) Միսաք Ռաֆիկի Աղամյան -30.000 դրամ
2) Հերմինե Համլետի Հովսեփյան -30.000 դրամ
3) Անետա Սիմակի Շիմալյան - 30.000 դրամ
4) Արտաշ Մամիկոնի Գալստյան -30.000 դրամ
5) Գոհար Մովսեսի Մադոյան -40.000 դրամ
6) Ռոզիկ Վլադիմիրի Ղազարյան -40.000 դրամ

2.Թումանյանի քաղաքապետարանի գանձապահ Անգին Ծատինյանին լիազորել Ալավերդու ՏԳԲ-ից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

Կողմ(4) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՇԽԵՆ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՍԵՅՐԱՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՌԱՄԱԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

2012թ. նոյեմբերի 19
ք. Թումանյան